

գաւոր հայլիներու վառարանը միացը-
նելով աղամանդը երեց :

Կատութեամբ խօսելով կրնայ ըսուիլ
թէ զուգահեռական ըսուած ձառա-
գայթը չի կրնար ըլլալ, որովհետեւ ըս-
ոյն ձառագայթները մէկ կէտէ մը՝ որ
է արեէն՝ կու գան : Իսայց արեւուն հե-
ռաւորութիւնը անհուն ըլլալով՝ եկած
շառաւիզներուն իրարմէ հեռանալը գրե-
թէ անըմքոնելի է, ուստի զուգահե-
ռական կրնանք սեպել :

(Ը) որ գոգաւոր հայլիի մը վառա-
րանին վրայ ձրագ մը դնելու ըլլանք,
ձրագէն եկած ձառագայթները այս
կերպով կ'անդրագառնան : Հայլիին ա-
ռանցքին ուղղութեամբ ինկած ձառա-
գայթը նոյն ուղղութեամբ ալ կ'ան-
դրագառնայ, վասն զի հայլիին մակե-
րեւութին ուղղահայեաց կ'ըլլայ . իսկ
հայլիին առանցքէն գուրս ուղղութիւ-
նինկած ձառագայթները անդրագառնա-
լու ժամանակնին՝ իրենց անկման և ան-
դրագարձութեան անկիւնները հաւա-
սար կը պահէն : Եւ ասով կը հասկը-
ցուի որ եթէ ձառագայթները իրար-
մէ հեռանալով գոգաւոր հայլիին վա-
ռարանէն հայլիին մակերեւութին վրայ
ինկնան, իրարու զուգահեռական կ'ան-
դրագառնան : Իսկ (թէ որ գոգաւոր
հայլիին վրայ զուգահեռական ինկնան,
իրարու մօտենալով կ'անդրագառնան,
ու վառարանին վրայ կը միանան : Եւ
այս բանս տեսաբանութեան գլխաւոր
օրինաց մէկն է :

(Մասնաւոր ուրու աստամ)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐԱՎՈՒՐՔ

1850 ուրագն դջ և անէէ էպեւ էղած աս-
տեղաբաշխական, բնաբանական և ուբէւ գլւ-
խա-որ գէ-ուբէրը :

Գ.

Լուսեաբաւածնութեան գիտութիւ-
նը այս վերջի տարիներս այնչափ առաջ
գնաց որ հիմայ ամիս չանցնիր, որ երկնից
երեսը մեծ զիւտ մը չըլլայ : Հազիւ
թէ երկու ամիս անցեր էր Իրենէ՝ պղտի
մոլորակին զիւտէն ետեւ, զոր անցեալ
մայիսի վերջերը գտան հայնտ ու տէ
կասպարիս երևելի աստեղաբաշխները,
այս յուլիսի 29ին, ըստ նորոց, տէ կաս-
պարիս ուրիշնոր պղտի մոլորակ մըն ալ
գտաւ՝ կափոլի, որ 9երորդ կարգի աստ-
ղի մը մեծութեամբ կը փայլի երկնից
երեսը : Լուսոր շարժումը յետախաղաց
է, և հրատին ու լուսնթագին մէջ
տեղը եղող մանր մոլորակաց խմբէն է,
որով բոլորը մէկէն ինչուան հիմայ տաս-
նըհինք հատ կ'ըլլան : Տէ կասպարիս
այս զիւտիս լուրը շուտով մը Պատուայի
Անդինի աստեղաբաշխին հաղորդելով
օգոստ . 4ին գրած նմանակով մը, Ան-
դինին ալ օգոստոսի 13ին իրիկունը գր-
տեր է այս պղտի մոլորակս և վըան զի-
տողութիւններ ըրեր է :

Հոս գնենք՝ կափոլիի ու Պատուայի
գիտողութիւնները, որ ինչուան այս օրս
(օգոստ 15) եղածներն են .

1851	Մ. Ժ. Կ. Ա. Ա. Պ. Օ. Լ. Ս. Ա. Յ.	ՈՒՂԻԴ. Ե. Լ. Բ.	ԽՈՏՈՐՈՒՄՆ
Հուլիս 29	11° 44' 53", 7	18° 15' 59", 94	- 26° 3' 54", 0
" 30	10 17 59 , 9	18 15 22 , 17	- 25 59 49 , 1
(Գոսա . 2	11 17 37 , 9	18 13 26 , 89	- 25 46 26 , 1
" 3	9 31 4 , 2	18 12 53 , 98	- 25 41 57 , 4
	Մ. Ժ. Պ. Ա. Տ. Ո. Ա. Յ.		
" 13	9 46 53 , 8	18 8 46 , 90	- 24 58 19 , 2
" 14	10 7 19 , 5	18 8 31 , 77	- 24 53 41 , 9

1 Տես երես 123, 195 : 2 Տես երես 191 : Այս անունը ձո՞ն չէրշել դրաւ՝ որ յունարկն բառ է .
և խուզութիւն ըսել է, իյիշատակ համաշխարհական արուեստից հանդիսին որ ՚ի լոնտոն .

Այս տամնը հինգ մոլորակացս մէջէն
՚ի բաց առեալ այս վերջինս՝ որուն վրայ
դեռ ամէն ծանօթութիւն չունինք, ա-
րեւուն ամենէն մօտը Փլորան է, ուս-
կից ունեցած միջին հեռաւորութիւնն
է իբր 2, 2, երկրիս հեռաւորութիւնը
1 սեպելով. իրեն արեւուն վրայ ունե-
ցած շրջաբերումն է 1192 օր կամ 3
տարի և $\frac{1}{4}$: Խակ արեւէն ամենէն հեռուն
Հիւգէան է, որուն միջին հեռաւորու-
թիւնն է իբր 3, 2, և շրջաբերումն է
2075 օր կամ 5 տարի և $\frac{2}{3}$: Խսնցմէ-
քանի մը հատ կան որ իրենց արեւէն
ունեցած հեռաւորութիւնը, և հետեւա-
բար իրենց շրջաբերութեան ժամանա-
կը մէկմէկու շատ մերձաւոր էն. ինչ-
պէս են ՚Եւմետը և Պալլաս, ՚Իրիս
կամ ՚Օփիածան և ՚Եղիս, ՚Երէ և
Պարթենոպէ, ՚Ֆերիա և ՚Իրենէ:

Պահանջ մէջ Պալլասայ պարունակին
մակարդակը ամենէն աւելի ծրի խա-
ւարման մակարդակին վրայ հակած է,
այսինքն է $34^{\circ} 37'$: | Կրմէ ետև Եղե-
րիան կու գայ, որուն պարունակին հա-
կումն է իբր $16^{\circ} 40'$, ետքը Երե, Հե-
րա, Դեմետրէ կու գան . ոմանց ալ
պարունակը շատ մօտ է ծրի խաւարման,
ինչպէս Հիւգէայի պարունակին հա-
կումն է $3^{\circ} \frac{3}{4}$:

Իսկ այս պարունակացս արտակեդրունութեանցը գալով, ամենէն մեծը հերայինն է, որ իրեն կէս-մեծափոյն առանգքին 0,256 է, ետքը իրենց մեծու-

Թեանը նուազմանը կարգաւ կու գան
Պալասին , Երիսին , Ա իկտորիային և
Լքէին արտակեղրոնութիւնները . ա-
մենէն պղտիկներն են Լգերիային ,
Ա եստային և Դաեմետրէին արտակե-
դրոնութիւնները . այս վերջինինը իրեն
կէս - մեծագոյն առանցքին 0,076 է :

Ուշակէտե Երենէի գտնուիլն երկու
ամիս չկայ , սակայն այլ և այլ աստե-
ղաբաշխներ իրեն թերածեական պա-
րունակին մերձաւոր տարեցքը հաշուե-
ցին : Իսոնց խօսքին նայելով այս պղտի
մոլորակիս շրջաբերութեան ժամանակն
է իրը 4 տարի և $\frac{1}{6}$, իրեն պարունակին
կէս - մեծագոյն առանցքն է 2,59 , ար-
տակեդրոնութիւնն է 0,17376 , և իր
պարունակին մակարդակին հակումն է
9° 8' :

Ո՞նչնդեռ տէ կասպարիս աստեղա-
բաշխը՝ Կափոլի այս վերջի նոր մոլորակը
դիտելու հետ եր, Պիրորսէն անունով աս-
տեղաբաշխն ալ Պոչեմիոյ մէջ Աէնֆ-
դէնպէրկէրի դիտարանէն այս օդոսո-
սի Են՝ նոր ամենապատիկ գիսաւոր մը-
գտաւ Ռարակը ըսուած համաստեղու-
թեան վրայ, որ ինքը շատ լուսաւոր
է կ'ըսէ: Ամոնսայէն Փէդէրսէն աս-
տեղաբաշխը, Ամպուրկէն Ոխւմքէր աս-
տեղաբաշխը և Հռովմէական վարժա-
րանի գիտարանին աստեղաբաշխներն
ալ հետզհետէ այս գիսաւորս դիտելով՝
հետեւեալ դրից մէջ գտեր են.

1851	Մ. Ժ. ՍԵՆԹՈՒՊԵՐՎԵՐԻ	ՈՒՂԱԴ. ԵԼ.Ք.	ԽՈՏՈՐՈՒՄՆ
(Գուտ. 1	13° 9' 21", 4 Մ. Ժ. ԱԼ.ԴՈՒՅՑ	13° 54' 58", 43	+ 31° 27' 7", 3
" 4	11 25 53 , 0 Մ. Ժ. ԱՄՊՈՒՐԿՈՅՑ	13 59 58 , 56	+ 32 48 20 , 3
" "	11 16 12 , 0 Մ. Ժ. ՀՌՈՎՄԱՅՑ	13 59 58 , 56	+ 32 48 20 , 5
" 15	8 49 16 , 0	14 21 24 , 5	+ 37 53 14 , 3
" 17	8 43 32 , 0	14 25 54 , 9	+ 38 49 56 , 2